ՆԱԽԱԳԻԾ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2016թ. դեկտեմբերի 20-ի թիվ 4 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,
Ա. Հ. Սիմոնյան
«20» դեկտեմբերի 2016թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ-ի, ֆակուլտետի կանոնադրությունների ու սույն կանոնադրության հիման վրա:
3. Կենտրոնը գիտահետազոտական և փորձագիտական ստորաբաժանում է, որի նպատակը սահմանադրական տնտեսագիտության ոլորտում գիտավերլուծական հետազոտությունների իրականացումն է:
4. Կենտրոնը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվանմամբ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Կենտրոնի նպատակներն են.

6.1. բացահայտել և վերլուծել սահմանադրական տնտեսագիտության ոլորտի իրավական, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրները, իրականացնել դրանց լուծումների վերաբերյալ գիտական մշակումներ, որոնք կնպաստեն հասարակության կայուն զարգացման քաղաքականության մշակմանը,

6.2. աջակցել սահմանադրական տնտեսագիտության ոլորտում գիտակրթական ու հետազոտական ծրագրերի մշակմանը և սահմանադրական տնտեսագիտության միջազգային լավագույն փորձի ներդրմանը,

6.3. սահմանադրական տնտեսագիտության իրավատնտեսական կարգավորումներին առնչվող որոշումների արդյունավետ տարբերակի ընտրության նպատակով շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ, գիտաժողովներ, մասնագիտական խորհրդատվություններ և դասընթացներ,

6.4. երկրների համեմատական վերլուծության հիման վրա մշակել սահմանադրականության մշտադիտարկման, ախտորոշման մեթոդներ և մոդելներ,

6.5. առաջադրել սահմանադրական տնտեսագիտության ոլորտում երկրների դասակարգման մոդելներ,

6.6. իրականացնել սոցիալ-տնտեսական մշակումներ՝ սահմանադրության դրույթների ցանկի՝ իրավունքի գերակայության ցուցանիշները համադրելով այլ երկրներում ընդունված նորմերի հետ,

6.7. պետական կառույցների հետ համատեղ մշակել տարբեր ոլորտներին առնչվող տնտեսական քաղաքականության սկզբունքներ, հաշվի առնելով սահմանադրական կանոնների ազդեցության կառուցակարգերը և կիրառելիության առանձնահատկությունները,

6.8. մշակել տնտեսական քաղաքականութան մեջ կիրառելի սկզբունքները և գործիքակազմը, որոնք կբարելավեն կառավարչական որոշումների գիտական հիմնավորումները,

6.9. ԵՊՀ-ի դասախոսներին և սովորողներին սահմանադրական տնտեսագիտության հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար, օժանդակել համապատասխան միջավայրի ստեղծմանը,

6.10. հրատարակել կենտրոնում իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները, մշակված ծրագրերը, մենագրությունները և ուսումնաօժանդակ նյութերը:

7. Կանոնադրությամբ կենտրոնի առջև դրված նպատակների արդյունավետ իրականացման նպատակով կենտրոնը կարող է համագործակցել միջազգային կառույցների, ՀՀ պետական մարմինների, գիտահետազոտական կազմակերպությունների ու կենտրոնների, հասարակական կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Կենտրոնի կառավարումն իրականացնում է կենտրոնի տնօրենը, ում ֆակուլտետի գիտական խորհրդի ներկայացմամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ-ի ռեկտորը:

9. Կենտրոնի տնօրենը՝

9.1. կազմակերպում կենտրոնի գիտահետազոտական և փորձագիտական գործունեությունը, ապահովում է կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

9.2. համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս կենտրոնի աշխատողներին,

9.3. սահմանված կարգով տնօրինում է կենտրոնի ֆինանսական միջոցները,

9.4. ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդին,

9.5. ստորագրում է կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը,

9.6. ներկայացնում է կենտրոնը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, կենտրոնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

9.7. պատասխանատվություն է կրում կենտրոնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

9.8. լուծում է կենտրոնի կանոնադրությունից բխող և կենտրոնի գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

10. Կենտրոնի գույքի և ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

10.1. կենտրոնին ԵՊՀ-ի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը և դրամական միջոցները.

10.2. ՀՀ պետական բյուջեից պետական պատվերի շրջանակում կամ այլ եղանակով հատկացված միջոցները,

10.3. ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, նվիրված և կտակված գույքը, դրամաշնորհները,

10.4. կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարվող միջոցները,

10.5. կենտրոնին թույլատրված գործունեության տեսակներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

12. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: